ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ

ՀԻՄՆԱՎՈՐ ԳԻՏԵԼԻՔՈՎ ԴԵՊԻ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Թիվ 9(69), 30 նոյեմբեր, 2024թ.

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ՆՇԱՆԱԿՎԵԼ Է ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐ

Հիմք ընդունելով վարչապետ Նիկոլ Փաշինյանի առաջարկությունը, համաձայն Սահմանադրության 131-րդ հոդվածի, ինչպես նաև «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի՝ Նախագահ Վահագն Խաչատուրյանի հրամանագրով Արփինե Սարգսյանը նշանակվել է Ներքին գործերի նախարար:

ԱՐՓԻՆԵ ԱՇՈՏԻ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծնվել է 1994 թվականի ապրիլի 14-ին, Վեդի քաղաքում: 2010-2015 թվականներին սովորել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում, ստացել է իրավագիտության բակալավրի աստիճան: 2015-2017 թվականներին ուսումը շարունակել է նույն համալսարանի իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայում, ստացել է գերազանցության դիպլոմ: 2015 թվականին նշանակվել է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրենսդրության զարգացման և իրավական վերլուծությունների վարչության քրեաիրավական օրենսդրության բաժնի փորձագետ, մեկ տարի անց՝ Եվրոպայի խորհրդի Աջակցություն Հայաստանում պրոբացիոն ծառայության ստեղծմանը» ծրագրի ազգային փորձագետ-վերապատրաստող:

2016 թվականի հունվարից հունիս Արփինե Սարգսյանը եղել է ՀՀ արդարադատության նախարարի տեղակալի օգնական, 2016-2019 թվականներին՝ նույն նախարարության աշխատակազմի հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության փորձագետ, որից հետո՝ առաջատար մասնագետ: 2017 թվականից Արփինե Սարգսյանը եղել է Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ոլորտի պատասխանատուների վերապատրաստող: Նույն թվականից մինչև 2022 թվականը եղել է ՀՀ քրեակատարողական նոր օրենսգիրքը մշակող աշխատանքային խմբի անդամ, 2017 թվականից Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ: 2018 թվականին Արփինե Սարգսյանը վերապատրաստել է Պրոբացիայի և քրեակատարողական ծառայողների:

2019 թվականի ապրիլից մինչ 2022 թվականի հունվար Արփինե Սարգսյանը եղել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում գործող տեղաբաշխման հանձնաժողովի անդամ, նույն թվականի ապրիլից նոյեմբեր՝ ՀՀ արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության քրեակատարողական քաղաքականության մշակման բաժնի պետ, որից հետո՝ մինչև 2020 թվականի հուլիս՝ նույն նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության պետ, ինչպես նաև համակարգել է քրեական և քրեական դատավարության նոր օրենսգրքերի նախագծերի լրամշակման, նոր օրենսգրքերին ՀՀ օրենսդրական ամբողջ դաշտի հարմոնիզացման աշխատանքները, կազմակերպել և համակարգել է քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի առաջին ռազմավարության մշակման և իրականացման գործընթացը:

2020 թվականի հուլիսից մինչ 2022 թվականի հունվար զբաղեցրել է ՀՀ արդարադատության նախարարության քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչության պետի պաշտոնը: 2022 թվականին եղել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության մրցութային հանձնաժողովի նախագահը, 2022 թվականին «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման» ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման մասին Հայաստանի 7-րդ պարբերական զեկույցի քննարկման ժամանակ՝ համանախագահ:

2022 թվականից Արփինե Սարգսյանը Ոստիկանության բարեփոխումների աշխատանքային բազմաշահառու խմբի ղեկավարն է, մասնակցել է Ոստիկանության ոլորտի 2020-2022 թվականների բարեփոխումների ռազմավարության իրականացման, Ներքին գործերի նախարարության ստեղծման աշխատանքներին:

2022-2023 թվականներին եղել է ՀՀ արդարադատության նախարարության համակարգմամբ գործող Անչափահասների արդարադատության բազմաշահառու խորհրդի ղեկավարը: Նույն ժամանակաընթացքում ներկայացրել է Հայաստանի Հանրապետության ՀՀ կառավարությունը Եվրոպայի խորհրդի խոշտանգումների կանխարգելման կոմիտեում և ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեում:

2022 թվականի հունվարի 21-ին ՀՀ վարչապետի որոշմամբ Արփինե Սարգսյանը նշանակվել է ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, իսկ 2023 թվականի հունվարի 9-ին՝ ՀՀ ներքին գործերի նախարարի տեղակալ:

2024 թվականի նոյեմբերի 20-ին ՀՀ վարչապետի առաջարկությամբ և նախագահի հրամանագրով՝ նշանակվել է ՀՀ ներքին գործերի նախարար:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՊԵՏԻ ՈՒՂԵՐՁԸ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ ուսանողներ՝ մեր ապագան կերտողներ, ջերմորեն շնորհավորում եմ Ուսանողության միջազգային օրվա կապակցությամբ:

Ուսանողության միջազգային օրը՝ նոյեմբերի 17-ը, նշում են աշխարհի տարբեր երկրներում: Այն մեր այսօրվա երիտասարդ երազողների, նորանոր գիտելիքներ ձեռք բերած, հետաքրքիր նախասիրություններ ունեցող և խանդավառ ուսանողության տոնն է, որը կարծես շեշտում է երիտասարդ լինելու և իրենց ներուժն առավել արդյունավետ օգտագործելու կարևորությունը:

Ցանկացած հասարակության համար հպարտության և կայուն ապագայի երաշխավորները հենց տվյալ սերնդի ուսանողներն են:

Դուք եք, որ պիտի դառնաք վաղվա լավագույն մասնագետները՝ ամեն մեկն իր ոլորտում ու գործունեության շրջանակներում: Դուք եք, որ պետք է ուղենիշ լինեք պետականության պահպանման ու երկրի ծաղկման անձնվեր գործերում:

Անչափ կարևոր է ձեր մասնակցությունը երկրի հասարակական, կրթական ու սոցիալական, ռազմահայրենասիրական նախաձեռնություններում: Դուք մեր երկրի շարժիչ ուժն եք:

Փաստ է, որ գիտակ երիտասարդների ակտիվ և միասնական ներգրավվածության շնորհիվ է հնարավոր երկրի ամենօրյա խնդիրների լուծումը, և միայն մասնագիտական խոր գիտելիքներով և կրթական բարձր մակարդակ ունեցող սերունդը կարող է դիմակայել պետության առջև ծառացած մարտահրավերներին:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ և ցանկանում, որ լինեք նպատակասլաց, ամեն օր հարստացնեք ձեր գիտելիքներն ու հմտությունները, որոնք ամբողջ կյանքում լինելու են ձեր հաջողությունների ու ձեռքբերումների գլխավոր երաշխիքը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ

Նոյեմբերի 6-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պետ, ոստիկանության գնդապետ Մանուկ Մուրադյանն ընդունել է Ֆրանսիայի Հանրապետության ԱԳՆ միջազգային անվտանգության համագործակցության վարչության տնօրեն Սեբաստիեն Դորդիայնին, նրա տեղակալ Ժիլ Բուրելին, ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության օպերատիվ անվտանգության խորհրդական Քրիստոֆ Բիդարին և Հարավային Կովկասում Ֆրանսիայի Հանրապետության կցորդ Օլիվիե Լեֆեբրին:

Ողջունելով հյուրերին՝ Մանուկ Մուրադյանը Կրթահամալիր այցելելու համար շնորհակալություն հայտնեց նրանց: Նա իր խոսքում նշեց, որ Կրթահամալիրը որդեգրել է բաց քաղաքականության ձևաչափ և այս տեսանկյունից խիստ

կարևորում է ոստիկանական կրթության ոլորտում Ֆրանսիայի գործընկերների հետ հարաբերությունները: Ներկայացրեց նաև ՀՀ ներքին գործերի նախարարությունում ընթացող լայնամասշտաբ բարեփոխումների հիմքում ընկած 4 հիմնական հենասյուները և նախանշված արդյունքներին հասնելու համար իրականացված կրթական գործընթացները:

Քննարկվեցին Ֆրանսիայի Հանրապետության ոստիկանական կրթական հաստատությունների հետ համագործակցության, կիբեռհանցավորության դեմ պայքարի և հասարակակական կարգի պահպանության վերաբերյալ ֆրանսիական փորձի ուսումնասիրման հնարավորությունը և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԱՌՑԱՆՑ ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ԽԱՂԻՆ

2024թ. նոյեմբերի 14-15-ին ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի ուսանողները մասնակցեցին ՌԴ ՆԳՆ Նիժնի Նովգորոդի ակադեմիայի կազմակերպած «Արհեստական բանականության դերը հասարակության և պետության կյանքում Տյուրինգի մոդելի ժամանակաշրջանից մինչև մեր օրերը» խորագրով ինտելեկտուալ խաղերին: Կրթահամալիրի ակադեմիան ներկայացնում էին առկա անվճար 3-րդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ Լիդիա Գրիգորյանը, առկա վճարովի 3-րդ կուրսի սովորողներ Վարդան Կարապետյանը, Ադրինե Հարությունյանը և առկա վճարովի 4-րդ կուրսի սովորող Մելսիդա Ավետիսյանը: Թիմի մարզիչն էր ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի պետի պարտականությունների ժամանակավոր կատարող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ոստիկանության մայոր Գայանե Մարուքյանը:

Ինտելեկտուալ խաղին մասնակցում էր 16 թիմ Ռուսաստանի, Բելոռուսի, Ղազախստանի և այլ ուսումնական հաստատություններից: Առաջին մրցափուլի ավարտից հետո մասնակից թիմերի ցանկում երկրորդ խաղափուլին ընդգրկվեց ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի թիմը և զբաղեցրեց երրորդ մրցանակային տեղը:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ 47 ՏԱՐԵԿԱՆ Է

2024թ. նոյեմբերի 10-ին ՀՀ ոստիկանության պատմության թանգարանը դարձավ 47 տարեկան:

47 տարի առաջ՝ 1977թ. նոյեմբերի 10-ին, պաշտոնապես բացվել է Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության ներքին գործերի մինիստրության մարտական և աշխատանքային փառքի թանգարանը, որի իրավահաջորդը ՀՀ ոստիկանության պատմության թանգարանն է:

Թանգարանի անվանումը վկայում էր այն մասին, որ ՆԳՄ-ն իրականացնում էր և՛ մարտական, և՛ աշխատանքային գործունեություն: Թանգարանի ստեղծման գործում մեծ դերակատարում են ունեցել ՆԳՆ վետերանները, որոնք նպաստել են ֆոնդերի համալրմանը: Մինչև 1988թ. թանգարան են այցելել դպրոցներից, աշխատավորական կոլեկտիվներից, իսկ 1988-2013թթ. թանգարանն իրականացրել է միայն ֆոնդերի պահպանման գործառույթ: 2010թ. ՀՀ ոստիկանության պետ Ա.Սարգսյանը թանգարանի աշխատանքները վերսկսելու հանձնարարություն է արձակել: 2013 թվականից այն վերանվանվել է ՀՀ ոստիկանության պատմության թանգարան, իսկ աշխատանքները վերսկսել է 2015թ. մայիսի 8-ից: Թանգարանի աշխատանքների վերսկսման մեջ մեծ ներդրում են ունեցել ՀՀ ոստիկանության պետեր՝ Ա.Սարգսյանը, Վ.Գասպարյանը, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի պետ Հ.Վարյանը, ՀՀ ոստիկանության վետերանների խորհրդի նախագահ Գ.Աբովյանը, թանգարանի առաջատար մասնագետներ Ա.Ծատուրյանը, Դ.Հովսեփյանը:

Թանգարանի վերսկսման աշխատանքների շնորհիվ ապահովվել է ֆոնդերի ցուցադրությունը, այցելությունների կազմակերպումը, ֆոնդերի համալրման և գույքագրման աշխատանքները: Թանգարանի աշխատանքների լուսաբանման համար օգտագործվել են ՀՀ ոստիկանության, կրթահամալիրի էլեկտրոնային կայքերը, պաշտոնաթերթը, ինչպես նաև թանգարանի մասին հրապարակվել է հայերեն, ռուսերեն և անգլերեն եռալեզու բուկլետ: Թանգարանի հիմնական նպատակն այցելությունների կազմակերպումն է: Թանգարանի աշխատանքները վերսկսելուց հետո այցելել են 4500 դպրոցականներ, ոստիկաններ, այլ պետությունների ներկայացուցիչներ, իսկ ֆոնդերի քանակը կազմել է 5722 միավոր:

Այսուհետ ևս թանգարանը շարունակելու է իր աշխատանքները՝ 48-ամյակը արժանավայել դիմավորելու համար:

Դավիթ Հովսեփյան
առաջատար մասնագետ,
ՀՀ ոստիկանության
պաշտոնաթող գնդապետ

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵՑԻՆ ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ

Այսօր թվականի նոյեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության Հայ օգնության ֆոնդի (ՀՕՖ) երեխաների պաշտպանության կենտրոնում ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի ՕՀԳ և քրեագիտության ամբիոնի դոցենտ, ոստիկանության գնդապետ Ա.Սահակյանն անցկացրեց ՀՀ ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 4-րդ կուրսի սովորողների՝ «Ընտանիքում բռնության և անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելումը» առարկայի գործնական պարապմունքը՝ նպատակ ունենալով ամրապնդել սովորողների ձեռք բերած տեսական գիտելիքները:

Պարապմունքի ժամանակ սովորողներին ներկայացվեցին այն հանգամանքները, որոնք պատճառ են դառնում ՀՕՖ-ի երեխաների աջակցության կենտրոնում անչափահասների հայտնվելուն: Դրանք առավելապես ընտանիք չունեցող, անապաստան մնացած, լքված, մուրացկանությամբ զբաղվող կամ բռնության ենթարկված երեխաներ են, որոնք նաև ձեռք են բերել վարքագծի շեղումներ: Սովորողների ուշադրությունը հրավիրվեց կենտրոնում երեխաներին տրամադրվող տարբեր ծառայությունների մատուցման ձևերին՝ ոստիկանության իրավական ծառայություն, բուժօգնություն, հոգեբանական աջակցություն, հակասթրեսային թերապիա և այլն:

Սովորողները տեղում համոզվեցին տվյալ գործընթացում ոստիկանության աշխատակցի ունեցած առանցքային դերակատարման մեջ:

ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԶԱՏ, ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԴՈՒՐՍ ԻՆՁ ՀԱՄԱՐ ԽԱԲՈՒՍԻԿ ԵՆ ԲՈԼՈՐ ԴՐԱԽՏՆԵՐԸ

Երկար տարիներ ես չեմ տեսել հայրենիքը, չեմ զգացել նրա ջերմացնող արևի շողերը և անմահության ոգով լցված Հայաստանի օդը:

Եվ ահա, երկար տարիներ ապրելով օտար հողում, որոշումը մեկն էր՝ իմ ընտանիքը պետք է վերադառնա, իմ եղբայրները պետք է ծառայեն իրենց հայրենիքի համար, ես էլ որոշում կայացրի՝ ծառայել ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրում: Օտար երկրում ապրելով և հայրենիքին կարոտ մնալով՝ ցանկացա ընդունվել համակարգ, որպեսզի դառնամ հայրենիքիս մի մասնիկը: Համազգեստս կրում եմ սիրով և պատվով կատարում իմ առջև դրված բոլոր խնդիրներն ու պարտականությունները: Իրադարձություններ են լինում ժողովուրդների կյանքում, որոնք կանխորոշում են նրանց հետագա ճակատագիրն ու դառնում ապագայի հենասյունը: Այսօր մեր անկախ պետությունը 34 տարեկան է: Ամեն մեկս մեր չափով նպաստենք մեր անկախ երկրի հզորացմանը՝ հանուն անկախության կերտման ճանապարհին նահատակված մեր բազում արիասիրտ հայորդիների: Միշտ պետք է հիշել, որ միայն հայրենասերների արդյունավետ նվիրումը երկիրը հայրենիք կդարձնի:

Եթե ուզում ես հարուստ երկիր, վերադարձի՛ր, աշխատի՛ր քո պետության համար. այն քո կարիքն ունի: Այն, ինչով շատերը պատրաստվում են արդարացնել իրենց անգործությունը, պարզապես հոգևոր վախկոտությունը զսպելու փորձ է: Հպարտության և հարգանքի են արժանի նրանք, ովքեր ճանաչել են արարման կարևորությունը, ովքեր լսել են իրենց հայրենիքի կանչը և վերադարձել են տուն:

Վերդարձե՛ք Հայրենիք:

Հայրենիքից զատ, հայրենիքից դուրս ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները:
Գ.Նժդեհ

Ջուլյանա Գասպարյան
քոլեջ, 2-րդ կուրս,
ոստիկանության կրտսեր սերժանտ

ԵՐԱԶԱՆՔՆԵՐ ՉՈՒՆԵՄ, ԿԱ ՆՊԱՏԱԿ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ՋԱՆԱՍԻՐԱԲԱՐ ԱՇԽԱՏԵԼ

«Կրթահամալիրի սովորողները» խորագրով նախագծի շրջանակներում այս անգամ զրուցել ենք ՀՀ ՆԳՆ ոստիկանության կրթահամալիրի 3-րդ կուրսի սովորող, ոստիկանության սերժանտ, Լիդիա Գրիգորյանի հետ:

- Ինչպիսի՞ ն էր փոքրիկ Լիդիան:

- Դե՛, բնականաբար, ես չեմ հիշում փոքրիկ Լիդիային, աղոտ ինչ-որ պահեր միայն... Մայրիկս ասում է՝ խելացի, հասկացող աղջնակ էի, միշտ ինչ-որ բան էի քանդում «բայց լավ նպատակով», ուսումնասիրում էի: Ակտիվ, շարժուն երեխա եմ եղել, հաճախել եմ երաժշտական դպրոց, պարի, սպորտի: Միշտ շարժի մեջ եմ եղել:

- Դրվագներ, որ տպավորվել են մանկության տարիներից: Որո՞նք էին մանկությանդ տարիների խաղերը:

- Մանկությունս շատ պայծառ ու անհոգ է անցել՝ չարաճճիություններով լեցուն, դե՛, բակային խաղերն էլ անպակաս են եղել: Խաղում էինք ամենատարբեր խաղեր՝ ֆուտբոլ, վոլեյբոլ, 7 քար, պահմտոցի, գործագործ (город за город), քարկտիկ ու էլի շատ խաղեր:

- Կպատմե՞ս դպրոցական տարիներից:

- Դպրոցական տարիներս բավականին հագեցած են եղել: Միշտ տարբեր միջոցառումներ, մրցույթներ, օլիմպիադաներ. Covid-19-ի ժամանակաշրջանում նաև աշակերտական խորհրդի նախագահ եմ եղել ու բազմաթիվ առցանց միջոցառումներ կազմակերպել: Հիմա էլ այդ ակտիվությունը շարունակական բնույթ է կրում:

- «Փոքրիկ իշխան». Անտուան դը Սենտ-Էքզյուպերի... Ինչպիսի՞ն է քո ստեղծած այլ մոլորակը:

- Մոլորակ՝ որպես այդպիսին, չունեմ, բայց նշեմ, որ չափազանց լավատես եմ ու երևի թե իմ մոլորակի հիմքը հենց լավատեսությունը կլինի, որտեղ մարդիկ բարյացակամ են:

- Ի՞նչ ես կարծում, կա՞ն վատ գրքեր:

- Կարծում եմ՝ չկան վատ գրքեր: Յուրաքանչյուր գիրք ունի իր «հասցեատերը», իր «լսարանը». զուտ ճաշակի հարց է:

- Քո ընթերցած գրքերից ո՞րն է ամենատպավորիչը, ո՞ր գիրքն է, որ 2-րդ անգամ կընթերցես:

- Շատ գրքեր եմ կարդացել, հիմնականում՝ պատմական ու դետեկտիվ, դրանից ամենատպավորիչը Ժորժ Սիմենոնի «Դեղին շունը» պատմվածքների գիրքն է, որը 2 անգամ կարդացել եմ և էլի կկարդամ:

- Ինչի՞ մասին ես երազում կյանքիդ այս շրջանում:

- Կյանքիս այս շրջանը բավականին հետաքրքիր ու փոփոխական է, երազանքներ չունեմ, կա նպատակ, որի համար պետք է ջանասիրաբար աշխատել:

- Խոսենք նախասիրություններից. ի՞նչն է, որ մի քանի ժամով քեզ կտրում է իրական կյանքից:

- Սպորտը, ֆիզիկական ակտիվությունը, քանի որ կյանքիս բոլոր փուլերում սպորտն անբաժան է եղել, ու միակ լիցքաթափվելու ձևը սպորտով զբաղվելն է:

- Ոստիկանական համակարգն ուժային կառույց է: Կին-ոստիկան. այս հակասությունները ինչպե՞ս ես կարգավորում:

- Ճի՛շտ է, ոստիկանական համակարգն ուժային կառույց է, ու միշտ հնչում են անհիմն կարծիքներ կին ոստիկանների՝ որպես թույլ սեռ լինելու մասին, բայց նշեմ, որ, բարեբախտաբար, մեր հասարակության մեջ այդ կարծրատիպերի պատնեշը ինչ-որ չափով թուլացել է, քանի որ ներկայումս համակարգում շատ կին ոստիկաններ ունենք:

- Ինչպե՞ս ընտրեցիր այս մասնագիտությունը:

- Մասնագիտությունս ընտրել էի դեռ 9-րդ դասարանում, գիտեի, որ բարդ է լինելու, դժվարությունների եմ բախվելու, բայց, ամեն դեպքում, սա իմ գիտակցված որոշումն է, որին պետք է հավատարիմ լինել:

- Ուսանողական տարիներ. ինչպիսի՞ն է Կրթահամալիրում ուսանողական կյանքը:

- Կրթահամալիրում ուսանողական կյանքը աշխույժ է, անընդհատ եռուզեռ՝ դատախաղեր, կոնֆերանսներ, բանավեճեր ինչպես կրթահամալիրի ներսում, այնպես էլ այլ բուհերի հետ, որոնք հնարավորություն են տալիս ձևավորել ծանոթությունների լայն շրջանակ:

- Ոստիկան /պարեկ/. մի քանի բառով բնութագրի՛ր՝ ինչ է քեզ համար այն:

- Ոստիկանն ապահովության, անվտանգության խորհրդանիշ է, որը պետք է լինի հումանիստ, բարձր մասնագիտական պատրաստվածությամբ ու հոգեբանական դիմադրողականությամբ:

- Մի քանի բառով նկարագրի՛ր Կրթահամալիրի սովորողի կերպարը:

- Կրթահամալիրի սովորողը զուսպ է, վարվեցողության բարձր արժեքներով, օրինակելի թե՛ հասարակության, թե՛ գործընկերների համար:

- Ո՞րն է ոստիկան դառնալու քո շարժառիթը:

- Կրթահամալիրը լավագույն ընտրությունն է նրանց համար, ովքեր ուզում են որակյալ կրթություն ստանալ ու լինել որակյալ մասնագետ:

- Եթե հնարավորություն տրվեր փոխելու մասնագիտությունը, ի՞նչ կընտրեիր:

- Կընտրեի մանկաբուժությունը. միշտ սիրել եմ այդ գործը:

- Թեմա, որի շուրջ անդադար կխոսես:

- Թեման էական չէ, կարևոր է՝ ում հետ:

- Ո՞րն է կյանքի շարժիչ ուժը քեզ համար:

- Կյանքի իմաստն այն ապրելու ու նորն արարելու մեջ է:

Բլից հարցեր
Պատասխանում ենք կարճ և արագ:

- Երեք բառ, որով կբնորոշես ինքդ քեզ:

- Հայրենասեր, նպատակասլաց, հետաքրքրասեր:

- Միտք, որն առաջինը ծագում է արթնանալիս:

- Կյանքի նոր օր է, հիանալի է:

- Օրն սկսում ես ժամը...

- 6:30-ին:

- Սիրածդ աֆորիզմը:

- Բոլոր պատասխանները մեր ներսում են, դրանք պետք է լսել:

- Սիրելի զբաղմունքդ:

- Սպորտ:

- Խորհուրդ, որը կտայիր:

- Սիրե՛ք աշխարհը, կյանքը, մարդկանց, լցվե՛ք լավատեսությամբ և ամեն ինչ կլինի այնպես, ինչպես պետք է:

- Իսկ վերջում... (ավելացրու՛ այն, ինչ մտքովդ անցնում է այս պահին)

- Գնահատե՛ք պահը և մի՛ վախեցեք փոփոխություններից:

Հարցազրույցը վարեց
առաջատար մասնագետ
Լիանա Սահակյանը

ՀԵՐՏԱՔՐՔՐԱՇԱՐԺ ՊԱՏՈՒՀԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ԹԵ՞ ԷՋՄԻԱԾԻՆ

Շատերին է հայտնի, որ էջմիածնաբնակ քաղաքացին որոշ փաստաթղթերով կարող է էջմիածնեցի համարվել, մեկ այլ տվյալներով՝ վաղարշապատցի: Բանն այն է, որ էջմիածինը Վաղարշապատ է անվանվել 1920 թ., իսկ 1945 թ. կրկին վերանվանվել է էջմիածին: Դրանից հետո քաղաքի անվան փոփոխման վերաբերյալ որևէ որոշում չի հրապարակվել, սակայն 1996 թվականից կրկին գործածության մեջ է դրվել Վաղարշապատ անունը:

Վաղարշապատը և նրա շրջակայքը բնակելի են եղել դեռևս մ.թ.ա. 6-3 հազարամյակներից: Այստեղ է գտնվում Շրեշ բլուրը, Մեծամորը, որոնք թվագրվում են էնեոլիթյան ժամանակաշրջանին:

Վաղարշապատի տարածքի և նրա շրջակայքի մասին առաջին գրավոր տեղեկությունները հայտնել է Վանի թագավոր Ռուսա Բ-ն՝ կոչելով բնակավայրը Կուարլինի կամ Կուտուրլինի հովիտ: Արդեն 3-րդ դարի վերջերի Վաղարշապատի մասին տեղեկություններ է հաղորդում Ագաթանգեղոսը:

Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո Վաղարշապատը դառնում է հայոց հոգևոր կենտրոն:

Միջնաբերդում կառուցվում է Մայր տաճարը, իսկ Հռիփսիմյան կույսերի նահատակման վայրերում՝ նրանց նվիրված մատուռները: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Մայր Տաճարը Ամենայն Հայոց Կաթողիկոսի նստավայրն է:

Էջմիածնի տարածքում վեց եկեղեցի կա՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Սուրբ Հռիփսիմե, Սուրբ Գայանե, Սուրբ Շողակաթ, Սուրբ Մարիամ Աստվածածին, Ձվարթնոց տաճար:

Ինչպես վկայում է Ագաթանգեղոսը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը տեսիլք ունեցավ, ըստ որի՝ Միածին որդին, իջնելով Արարատյան դաշտավայր, Վաղարշապատ մայրաքաղաքում ցույց տվեց այն վայրը, որտեղ պիտի կառուցվի տաճարը և հաստատվի Հայոց քահանայապետական աթոռը: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հենված է հոսող ջրերի վրա, որոնց քարերի դասավորվածությունը թույլ է տալիս երկրաշարժի դեպքում ճոճել կառույցը և խուսափել փլուզումից:

Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարն աշխարհասփյուռ հայ ժողովրդի հոգևոր կենտրոնն է, Սրբություն Սրբոցը:

Բացառիկ է նրա առաքելությունը հայ ժողովրդի ազգային-հոգևոր ու մշակութային կյանքում: Ոչ մի այլ ազգային «գանձ» այնքան մեծ դեր ու նշանակություն չի ունեցել ու չունի, որքան Սուրբ Էջմիածինը: Դարերի ընթացքում Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարը ենթարկվել է այն բոլոր փորձություններին, ինչ իր հարազատ ժողովուրդը: Նրա պատերն ասես կրում են հայ ժողովրդի պատմության կնճիռներն ու նրա հարատևման կնիքը: Կա՞ արդյոք մի հայ, որ լսած չլինի այս սրբանվեր ու աստվածահունչ անունը՝ Սուրբ Էջմիածին: Այն հայ ժողովրդի սիրտն ու հոգին է, նրա գոյության զարկերակը, և, իհարկե, իր աշխարհացիր զավակների դարավոր հոգևոր մշակույթի անպատմելի ու յուրահատուկ արտահայտությունը:

Էջմիածինն ունի իր դրոշը, որի դեղին գույնը՝ ծիրանագույնը, խորհրդանշում է արքայական ծիրանին, քանի որ էջմիածինը եղել է արքայանիստ քաղաք, իսկ մանուշակագույնը խորհրդանշում է քաղաքի կաթողիկոսանիստ լինելը, կենտրոնում նարնջագույնով պատկերված հայերեն մեծատառ նախշազարդ «Է» տառը՝ էություն, Աստված:

Հինգերորդ դարից ի վեր էջմիածինը եղել է ոչ միայն հայ ժողովրդի նշանավոր ուխտատեղի, այլև մշակույթի հին ու նոր կոթողներով գրավել այլազգի գիտնականների, գրողների և ճարտարապետների ուշադրությունը:

Էջմիածնում գործում են թանգարաններ, երաժշտական, գեղարվեստի դպրոցներ և գրադարաններ:

Էջմիածնում են ծնվել կոմպոզիտոր Մակար Եկմալյանը, նկարիչներ Մհեր Աբեղյանը, Լևոն Մանասերյանը և շատ ուրիշ երևելի մարդիկ:

Էջմիածինը նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» կազմակերպության անդամ է:

Էջմիածնեցին անկեղծորեն սիրում է իր քաղաքը և, իրավամբ, հպարտանում նրա փառավոր պատմությամբ, բայց նաև խորապես համոզված է, որ ինքն անբաժան է այդ պատմությունից, ավելին՝ այն կերտողներից մեկն է, ուստի պարտավոր է անել իրենից կախված հնարավորը, որ համայն հայության հոգևոր կենտրոն, ալեհեր ու հավերժ երիտասարդ իր սիրելի քաղաքի ապագան լինի առավել գեղեցիկ ու լուսավոր:

Ա. Ք.

ԱՐԺԱՆԱՑԵ՛Ք ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻՆ

«Օրենքի պատվար» մեդալով ծառայողները պարգևատրվում են ոստիկանության գործունեության զարգացման, օրինականության ամրապնդման, հանցավորության դեմ պայքարի, հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման, անձնակազմի դաստիարակության գործում զգալի ներդրում ունենալու, ինչպես նաև հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար:

«Իրավակարգի ամրապնդման համար» մեդալով ծառայողները պարգևատրվում են ոստիկանության գործունեության զարգացման, իրավակարգի ամրապնդման, հանցավորության դեմ պայքարի, հասարակական կարգի պահպանության, անձնակազմի դաստիարակության գործում զգալի ներդրում ունենալու, ինչպես նաև հատուկ առաջադրանքները գերազանց կատարելու համար: «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալով ծառայողները պարգևատրվում են «Օրենքի պատվար» մեդալով պարգևատրվելուց հետո:

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՓԱՍՏԵՐ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Օլիմպիական խաղերի մեկնարկի պաշտոնապես գրանցված տարեթիվը մ.թ.ա. 773 թվականն է: Բազմաթիվ մրցույթների հաղթող է դարձել մարզիկ Հերակլեսը, որի ֆիզիկական ուժն արտացոլված է առասպելներում, պահպանված քանդակներում և հնագույն սպորտային ճարտարապետության մասին արձանագրություններում: Խաղերը կոչվում են Օլիմպիական, որովհետև առաջին անգամ Օլիմպոս քաղաքում են անցկացվել: Օլիմպիական խաղերին մասնակցում էին միայն տղամարդիկ, այն էլ՝ պարտադիր մերկ: Այդ կանոնը երկու հիմնավորում ուներ.

1. Կանանց արգելվում էր մասնակցել օլիմպիական խաղերին. նրանք տրիբունաներում լինելու իրավունք չունեին: Պատմության էջերում գրանցվել է Կալիպատերիա անունով մի կին, որը մտել էր տրիբունա, ինչի պատճառով էլ քիչ էր մնացել զրկվեր կյանքից: Այդ դեպքից հետո բոլորը պարտավոր էին մասնակցել օլիմպիական խաղերին մերկ, որ ոչ մի կին չկարողանա խորամանկել և ներս մտնել:

2. Անտիկ ժամանակներում կար մերկ մարմնի պաշտամունք: Մերկ վիճակում մարզիկների համար ավելի հեշտ էր ցուցադրել իրենց մկանների և կազմվածքի գեղեցկությունը: Այդ ժամանակվա բոլոր արձանները պատկերում էին մերկ մարմիններ:

Հնում կայանալիք խաղերի մասին մարդիկ տեղեկանում էին սուրհանդակների միջոցով, որոնք շատ արագավազ էին և գիշեր-ցերեկ վազելով՝ լուրը տեղ էին հասցնում:

Մարզիկներն Օլիմպոս էին գալիս խաղերից մեկ ամիս առաջ և հմուտ մարզիչների օգնությամբ պատրաստվում մրցումներին: Օլիպիական խաղերի օրերին դադարեցվում էին պատերազմները:

Խաղերը տևում էին հինգ օր: Մարզիկները մրցում էին հետևյալ մարզաձևերում՝ վազք, ցատկ, սկավառակի նետում, ըմբշամարտ, բռնցքամարտ և անվակառքերով մրցում: Հաղթողները մեծ փառքի ու ճանաչման էին արժանանում: Սակայն տարիների ընթացքում օլիմպիական խաղերը կորցրին իրենց կարևորությունն ու մի քանի հարյուրամյակ դադարեցին: Վերսկսվեցին միայն 1896 թվականին:

Օլիմպիական նշանաբանը՝ Citus, Aitus, Fortus, որը լատիներենից թարգմանաբար նշանակում է «Արագ, Բարձր, Ուժեղ», 1986 թվականին առաջարկել է Պիեռ դը Կուբերտենը, սակայն պաշտոնապես ընդունվել է 1924 թվականին:

Օլիմպիական դրոշը սպիտակ կտավ է, որի կենտրոնում օլիմպիական խորհրդանիշն է՝ 5 միահյուսված օղակներ՝ կապույտ, սև, կարմիր, դեղին և կանաչ, որոնք տեղադրված են երկու շարքով (երեքը՝ վերևում, երկուսը՝ ներքևում):

Օղակները խորհրդանշում են հինգ մայրցամաքների միասնությունը և Օլիմպիական խաղերի համաշխարհային կամքը: Ի տարբերություն տարածված տարբերակի՝ օղակներից յուրաքանչյուրը չի պատկանում որևէ կոնկրետ մայրցամաքի: Վեց գույն (կտավի սպիտակ ֆոնի հետ միասին) համակցված են, նրանք ներկայացնում են աշխարհի բոլոր երկրների ազգային գույները՝ առանց բացառության: Օղակները միացված են շղթայով՝ W-ի ձևով, ընդ որում՝ ծայրերի (կապույտ, կարմիր) օղակներից յուրաքանչյուրը միահյուսված է մեկը մյուսին, իսկ կենտրոնի երկու օղակներն էլ միահյուսված են միմյանց:

Օլիմպիական խաղերի օրհներգի հեղինակը հույն կոմպոզիտոր Սպիրոսոմ Սամարասոմն է: Այն հնչում է, երբ բարձրացվում է օլիմպիական դրոշը՝ Խաղերի բացման ժամանակ, Խաղերի ավարտին, նաև որոշ դեպքերում:

Կանանց առաջին անգամ թույլ են տվել մասնակցել օլիմպիական խաղերին 1900 թվականին: Հայ մարզիկներն օլիմպիական խաղերին սկսել են մասնակցել 1912 թվականին:

Հայաստանը տարբեր տարիներին ներկայացրել են հիմնականում հայ և ռուս մարզիկներ: Հայ մարզիկներն օլիմպիական խաղերին մասնակցում են 1952 թվականից: 1952-1988 թվականներին Հայաստանը հանդես է եկել ԽՍՀՄ դրոշի ներքո: ԽՍՀՄ փլուզումից հետո՝ 1992 թվականից, նախկին խորհրդային հանրապետությունները հանդես եկան ԱՊՀ դրոշի ներքո: 1996 թվականից Հայաստանի մարզիկներն օլիմպիական խաղերում հանդես են գալիս Հայաստանի դրոշի ներքո:

2016 թվականի օգոստոսի 17-ին, Ռիոյի ամառային օլիմպիական խաղերում Արթուր Ալեքսանյանը հռչակվեց հունահռոմեական ոճի ըմբշամարտի օլիմպիական չեմպիոն՝ նվաճելով անկախ Հայաստանի պատմության երկրորդ օլիմպիական ոսկե մեդալը (1996 թվականի Ատլանտիայի օլիմպիական խաղերում Արմեն Նազարյանի նվաճած ոսկուց հետո):

Աշոտ Գրիգորյան
ոստիկանության գնդապետ

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

1. Արաբական ասացվածքն ասում է. «Լավագույն լեզուն զսպված լեզուն է, իսկ լավագույն խոսքը՝ մանրակրկիտ մտածվածը: Երբ մարդը խոսում է, ապա նրա բառերը պետք է լինեն ավելի խելացի քան ...»: Ինչի՞ց խելացի պետք է լինեն:

2. 1859թ. Ավստրալիա ներմուծեցին այս կենդանիներից ընդամենը 16 հատ: Արդեն 3 տարուց նրանք դարձան իսկական աղետ: Ի՞նչ կենդանի էր դա.

Ստեղծագործում են մերոնք

ՁՈՆ ՀՈՐՍ

Քայլ առ քայլ կյանքիս էջերն եմ թերթում,
Մանուկ օրերիս կարոտն է վառվել,
Արդեն վաղուց է՝ մի միտք եմ անում.
Ի՞նչ կա հոր սիրուց կյանքում առավել:

Երբ հողմերն են ինձ ոտնատակ գալիս,
Ու ժայռերը վեհ խոնարհվում անել,
Մի ուժ է ներսից կոկորդս խեղդում.
Ի՞նչ կա հոր սիրուց կյանքում առավել:

Եվ բարձունքներիս գագաթին թիկնած՝
Գոհունակ դեմքս կյանքին եմ հառել,
Այս ամբոխամոլ, խառնակ աշխարհում
Ի՞նչ կա հոր սիրուց կյանքում առավել:

Ինքս իմ աչքում իմաստուն դարձած՝
Որքա՜ն անգամ եմ, սակայն, սայթաքել,
Բայց ծնկաչոք եմ խոսքերիդ դիմաց.
Մի՞թե կա կյանքում հոր սիրուց ավել:

Երբ հոգնել էի բոլոր սերերից,
Եվ մայրս քնքուշ արցունք էր դարձել,
Թևաթափ սրտիս մի ուժ էր պահում.
Չկա՛ քո սիրուց, հա՛յր իմ, առավել:

Շուշանիկ Հոդաբաշյան
շրջանավարտ

ՏՈԿԱՑԵ՛Ք, ՏՂԵ՛ՐՔ

Հայաստանն իմ տունն է, իմ օջախն ու ամրոցն է...
Քե՛զ եմ դիմում, հայկյան արմատի ըմբո՛ստ զավակ,
Քե՛զ եմ դիմում մեր ամենահաղ՛թ, ամենագու՛թ հայկազուն զավակ:
Ես չեմ երկմտում հավատիդ, ուժիդ, անծիր կորովիդ:
Ես հավատում եմ անկոտրում կամքիդ, սրաթև մտքիդ ու հաղթանակիդ:
Դուք ուժե՛ղ եղեք, որ բարին հաղթի:
Պիտի ջախջախենք գլուխը օձի՝ նենգ ու տմարդի:
Լեռներից էլ վեհ, լեռներից էլ պինդ կանգնած եք ահա...
Տոկացե՛ք, տղե՛րք, թիկունքից ահա առաքում եմ Ձեզ մի կտոր մեծ սեր,
Մեծ բաժին հավատ, Աստծո օրհնություն, անկոտրում կամք ու հույսի թևեր...

Սուսաննա Մեջլումյան
ոստիկանության լեյտենանտ

ԽՈՐՀՈՒՄ ԵՆ ՄԵԾԵՐԸ

Ոչինչ այնքան վտանգավոր չէ, որքան այն տխմարը, որը ցանկանում է խելոք երևալ:

Գյոթե

***

Լեզվի և դանակի տարբերությունն այն է, որ առաջինը մշտական գործածությունից ավելի է սրվում:

Լամարթին

***

Նա, ով մտածում է, թե իբր կարող է ապրել առանց ուրիշների, խիստ մոլորության մեջ է, բայց ավելի շատ է մոլորվում նա, ով կարծում է, թե ուրիշներն առանց իրեն չեն կարող ապրել:

Լառոշ Ֆուկո

***

Քայլ առ քայլն առևտրի օրենքն է, սակայն ո՛չ ընկերության: Առևտուրն ընկերություն չի ճանաչում, ընկերության մեջ էլ առևտուր չպետք է լինի:

Լեսինգ

***

Պատանեկության արատները չի կարելի պահել մինչև ծերություն, քանզի ծերությունն իրենն է բերում:

Գյոթե

***

Կրակ բորբոքողն իրավունք չունի դժգոհելու, երբ կայծերը դիպչում են նրա երեսին:

Ֆրանկլին

***

Միաբանությունը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը:

Եղիշե

***

Բարձրագույն դատարանը խղճի դատարանն է:

***

Հրաժարվել մտածելուց՝ նշանակում է հայտարարել իր հոգևոր սնանկությունը:

Հյուգո

***

Եթե ինչ-որ մեկը երկար լեզու ունի, նշանակում է՝ ինչ-որ մեկն էլ երկար ականջներ պիտի ունենա:

Հովնաթան

ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ
Լրատվական գործունեություն իրականացնող ՀՀ ՆԳՆ կրթահամալիր ՊՈԱԿ, հասցե՝ ք. Երևան, Ծովակալ Իսակովի փողոց, 29, հեռախոս՝ 010 77 08 73:
Գրանցման վկայական՝ 29021003884:
Տպագրվել է «Աստղիկ Գրատուն» հրատարակչությունում:
Ծավալը՝ 1 մամուլ: Տպաքանակը՝ 300 օրինակ:
Ստորագրված է տպագրության 30.11. 2024թ.:
Համակարգչային շարվածքը՝ «Պատիվ ունեմ» ամսաթերթի:
Գլխավոր խմբագիր՝ Արուսյակ Քոչարյան